ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊԻՏԻ ԸՆՏՐԵՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԸ

Գրնում է ԳԱԱ ակադեմիկոս ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԸ

ՍՈՒՅԵՏԱԿ

-ԳԱԱ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների վերջին ընտրությունների վերաբերյալ մամուլում հակասական մեկնաբանություններ, բուռն քննարկումներ եղան, որոնք կարելի էր այսպես ձեւակերպել՝ ընտրվածների մեջ անարժաններ կային, չընտրվածների մեջ՝ արժանիներ: Ինչպե՞ս եք գնահատում մամուլի արձագանքները:

-Ինձ հատկապես դուր չի գալիս ակադեմիայի հասցեին ասված խոսքերը, ուր ընդհուպ մինչեւ ակադեմիայի անհրաժեշտության հարց է բարձրացվում: Մինչդեռ ԳԱԱ-ն երկրի ընդհանուր կառուցվածքում բացառիկ տեղ ունի, մի հաստատություն է, որ որոշում է ազգի դիմագիծը, նրա ինտելեկտուալ մակարդակը, եթե կուզեք, նաեւ նրա համաշխարհային արձագանքը:

Ինչ վերաբերում է արձագանքներին, պիտի ասեմ՝ ինձ համար տարօրինակ է, որ նրանք, ովքեր չեն անցել, բացասական կարծիք են հայտնում ոչ միայն տվյալ ընտրությունների, այլեւ առհասարակ ակադեմիայի մասին: Մինչդեռ հարց է ծագում՝ եթե նրանք անցնեին, ակադեմիայի վերաբերյալ նույն կարծիքը կհայտնեի՞ն:

Իհարկե հարգում եմ եւ անցածներին, եւ նրանց, ովքեր չեն ընտրվել: Հնարավոր է, որ չընտրվածների մեջ կան իսկապես արժանավոր մարդիկ, բայց տեղը մեկն է: Ենթադրենք, 5 հոգին էլ հավասար արժանիք ունեն, ինչպե՞ս կատարել ընտրությունը: Ուրեմն պետք է մի քիչ ավելի շրջահայաց լինել, լայնախոհություն դրսեւորել երեւույթի հանդեպ:

-Կոնկրետ օրինակ ունե՞ք:

-Ասենք, Լեւոն Չուգասզյանը (ԵՊՀ արվեստի պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր) երբ տեսավ, որ ինքը չի ընտրվել, հայտարարեց, թե ակադեմիայի անունը այլեւս չի ուզում լսել: Մինչդեռ նա, ով ընտրվել էր՝ Վիգեն Ղազարյանը, իրոք արժանի է: Չեմ ասում ինքը արժանի չէ, ինքն էլ է արժանի, բայց տեղը մեկն է: Գիտեք, ակադեմիան փակ համակարգ է, այնտեղ կատարվող ընտրությունները չպետք է համեմատել համընդհանուր դեմոկրատական սկզբունքների հետ: Ընդ որում, ակադեմիան բոլոր երկրներում է փակ համակարգ:

Ընդհանրապես եթե գիտնականը լավ գիրք է գրում, չի նշանակում, թե պարտադիր պիտի ակադեմիկոս դառնա:

-Հասարակության մեջ դեռ նախանախորդ իշխանությունների ժամանակ արմատավորվեց, թե այսքան գիտնականներ, ակադեմիական ինստիտուտներ ունենալը շռայլություն է, քանզի այդ հիմնարկներում պարապություն է տիրում:

-Ո՞վ է ասում, թե այնտեղ գործ չի կատարվում: Բոլոր ինստիտուտներում էլ կատարվում է: Ի վերջո, եկեք անկեղծ լինենք՝ դուք ի՞նչ եք տալիս ակադեմիային եւ ի՞նչ եք պահանջում նրանից: Շատ երկրորդական խնդիր է համարվում գիտական աշխատողի աշխատավարձի չափը, բայց չէ որ նա պետք է նախ ապրի եւ հետո միայն ստեղծագործի, իսկ այդ հնարավորությունը պետությունը չի տալիս: Խնդրեմ, ըստ ամենայնի ապահովեք ակադեմիայի ինստիտուտների տեխնիկական ու նյութական վիճակը եւ այն ժամանակ պահանջեք:

Ապա շատ են խոսում ԳԱԱ ակադեմիկոսներին տրվող պատվովճարի մասին: Անհեթեթություն է: Ոմանք կարծում են, թե ակադեմիկոսը պետք է ամեն տարի ինչ-որ գյուտ անի, որ արդարացվի նրա պատվովճարը: Բայց չէ՞ որ ակադեմիկոսը դրան արժանացել է ընդհանրապես գիտության մեջ իր ներդրած արժեքների համար: Ասենք, մենք, ԳԱԱ գրականության ինստիտուտը ժամանակին, 60-ական թվականներին հրատարակել է «Հայ գրականության պատմություն» 5 հատորը: Ժամանակին կասեիք՝ դա ակադեմիային արժանի գործ է, բայց չէ՞ որ այն հիմա էլ է շրջանառության մեջ, հիմա էլ են կարդում: Այսինքն՝ այն հավելյալ արժեք ունի՝ կարդում են ուսանողները, գիտնականները, ուսուցիչները, դպրոցականները:

Կամ՝ եթե ֆիզիկոսը մի գյուտ է անում, այդ գյուտը հո տվյալ օրվա համա՞ր չէ: Այն հավելյալ արժեք ունի: Ուրեմն ակադեմիկոսը այսպես թե այնպես պիտի մի քիչ ապահով լինի, որ հատուցվի նրա արած արժեքավոր գործը:

Այնուամենայնիվ համարում եմ, որ ընտրական համակարգի մեջ պիտի որոշ վերանայումներ կատարվեն: Կարծում եմ, ճիշտ կլինի, որ ընտրությունները վերապահվեն միայն ակադեմիկոսներին: Այսինքն՝ թող թղթակից անդամը չքվեարկի թղթակից անդամի համար, եւ ակադեմիկոսները իրենց քվեարկությամբ որոշեն. թղթակից անդամն արժանի՞ է, թե՞ ոչ: Ըստ իս, ընտրության հարցն այսպիսով ավելի ճիշտ կլինի:

Իսկ արդյունքները, իմ կարծիքով, պիտի վերջնականապես հաստատվեն ակադեմիայի նախագահությունում: Ակադեմիայի դռները բացելու դեմոկրատական սկզբունքը համարում եմ վերանայման արժանի:

-Պարոն Սարինյան, չե՞ք կարծում, որ նմանօրինակ ներփակ երեւույթները հոմոսովետիկուսի հետ աղերսներ ունեն, մանավանդ մեր ժամանակներում բոլոր բնագավառներում են կարեւորվում թափանցիկ ընտրությունները:

-Այդ դեպքում ինչո՞ւ կաթողիկոսի ընտրություններն էլ համաժողովրդական չենք դարձնում: Չենք դարձնում, որովհետեւ գոյություն ունի Սինոդ: Նույն կերպ ակադեմիան էլ փակ համակարգ է, եւ ճիշտ է, որ ակադեմիկոսներն ընտրեն թղթակից անդամներին:

Միաժամանակ այն կարծիքին եմ, որ ԳԱԱ նախագահության չմիջամտելը ընտրություններին միշտ չէ, որ իրեն արդարացնում է: Չէ՞ որ կան գիտնականներ, որոնք իսկապես արժանի են ընտրվելու, բայց երբեմն նույնիսկ չեն դիմում: Նման դեպքերում նախագահությունը կարող է ինքը նախաձեռնություն հանդես բերել: Այսինքն՝ այն համոզման եմ, որ առաջադրված թեկնածուները պիտի լուրջ քննության ենթարկվեն:

Սա իմ տեսակետն է, որը թերեւս որոշակի կանոնակարգման կարիք ունի:

-Պարոն Սարինյան, մենք խոսում ենք ակադեմիական համակարգի խնդիրներից, մինչդեռ այսօր արդի գրականության խնդիրներն ավելի քան հրատապ են եւ հուսահատեցնող:

-Անկեղծ ասած, չէի ցանկանա արդի գրականության մասին խոսել, որովհետեւ այստեղ զարմանալի վիճակ է տիրում: Գրականության ընդհանուր վիճակը չպետք է նույնացնել գրողների միության կազմակերպական գործունեության հետ: Դրանք տարբեր բաներ են: Տվյալ պարագայում հարց է ծագում՝ գրողների միությունը կամ նախագահությունը կարողանո՞ւմ է ըստ ամենայնի վերահսկել գրական պրոցեսը, ընթացք տալ գրականության զարգացումներին: Կարծում եմ, այստեղ որոշակի թերացում կա:

ՄՆԱՑԱԿԱՆ ԵՍԱՅԱՆ